մինչև մի քրդական կամ պարսկական և կամ օսմանեան խլրտում յառաջ գայր, ժողովրդեան խաղաղ վիճակ վրդովէր, որով կստիպուէին իւրեանց նախորդաց օրինակին հետևիլ, խոյս տալ։

Գիւղս Շահկիոլ և Բոզ-Թէփէ լեռներու ի հարաւ խոնարհած և սպառած թևերու միջավայրն դաշտիս ի հիւսիս մնած անկիւնը շինուած է, որով միայն իւր տեսարանն է ի հարաւ դաշտային քանի գիւղօրայք, Ղլիճ կետուկի շղթայն և ծաղկանց լեռներն։

Մօլա-սիւլէյման գիւղի յարևելս է Վաղարշակերտ, մենք արդէն առաջին անգամ զայն նկարագրեցինք կառավարչանիստ լինելուն, այժմ անցնենք Վաղարշակերտի յարևելս, Խաչլու հայ գիւղի վերայ ևս մասնաւոր տեղեկութիւն տալ։

Գիւղս Թօփրաղ-գալէից մէկ ժամ արևելեան հիւսիս դաշտիս հիւսիսային եղրն՝ երկու ժամ յարևմուտս Ամատ գիւղին, նաև Բոզ-Թէփէ լերան հարաւային ստորոտներուն մերձ 110 տնուոր հայաբնակ գիւղ է։

Սորա քաւշանի լեռնային մասն՝ Կալոյի և Մանտակներ գետակաց միջավայրը բռնած է, կը տարածուի 2 $^1/_2$-3 ժամ ի հիւսիս գտնուած շղթային գագաթն երկու ժամ լայնութեամբ, իսկ դաշտային մասի լայնութիւնը 1 $^1/_2$ ժամ է, որ կը հասնի յարևմտից Մանտակներ, հարաւից Մամատան, Ղայաբէկ և Իրիցու[1] գիւղ, Հայտար օղլու, յարևելից Կալոյի ջրին վերայ գտնուած Թուրքմեներ, Ազրայիլ և Ցէտէ-Մագսուտ գիւղօրէից,

---

1. Իրիցու գիւղեր երկու են, այս Իրիցու գիւղն որ Վաղարշակերտի կը պատկանի, ուր կաթոլիկ հայեր կը բնակին, կատուի Գրանկ Իրիցու կամ Ծեւ Իրիցու գիւղ, իսկ Գարա-Քիլիսէի մօտ գտնուած Իրիցու գիւղին կասեն Ջաշուտայ Իրիցու գիւղ։